ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՈՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆ

«ԹԻՒՔ ՊԱՏՐԻԱՐՔԱՑ». ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐԻ ԱՆՏԻՊ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Երուսաղեմի հայոց Ս. Հակոբյանց մայրավանքի ձեռագրատան չորս հազարի հասնող ձեռագիր մատյաններից բացի, պատրիարքությունում պահվում են նաեւ հույժ կարեւոր վավերագրեր ու դիվանական փաստաթղթեր: Դրանք թագավորների, կուսակալների, Երուսաղեմի քաղաքապետների հրամանագրեր, որոշումներ են, պատրիարքական գրագրություններ ու նամակներ, արխիվային բազմաբնույթ այլ փաստաթղթեր, որոնք վերաբերում են հատկապես ուշ միջնադարյան շրջանին: Այդ վավերագրերի չնչին մասն է միայն հրատարակվել եւ գիտական շրջառանության մեջ դրվել: Որպես օրինակ կարելի է բերել «Սիոն» հանդեսում հրատարակված՝ Գրիգոր Շղթայակիր պատրիարքի (1717-1749) նամականին[1], որն անգնահատելի աղբյուր է իր ժամանակի հայ Երուսաղեմի պատմության, միջեկեղեցական ու միջհամայնքային հարաբերությունների, դավանաբանական եւ շատ այլ հարցերի, նաեւ այդ շրջանի հայերենի ուսումնասիրության համար: Գր. Շղթայակրի նամակները հրատարակած Ա. Գալաճյանի առաջաբանից կարելի է պատկերացում կազմել, օրինակ, թե ինչպիսին է եղել միաբանության անդամների վերաբերմունքը այդ վավերագրերի պահպանման հարցում. «Նամակները նախապէս դիւանատան մէջ պահուած են իբրեւ անջատ թուղթեր, եւ միայն 1907ին է, որ նորընտիր լուսարարապետ Դաւիթ վրդ. Տէրտէրեանի հրահանգով Չնքուշի նախկին առաջնորդ եւ ապա Երուսաղէմ հաստատուած Մինաս վրդ. Ամրիկեան զանոնք կը միացնէ եւ կը կազմէ իբրեւ երկու տետրակներ»[2]:

Հանրահայտ պատրիարք Գրիգոր Շղթայակրի նամականին արժանացել է տպագրության բախտին, սակայն բյուրավոր փաստաթղթեր առ այսօր

1 Գրիգոր Շղթայակրի նամականին, «Սիոն», 1972-73 թթ., հրատ.՝ Արա Գալաճյան, ընդհանուր թվով 55 նամակ:

2 «Սիոն», 1972, էջ 352:

մնում են անտիպ եւ անհասանելի են գիտական շրջանակներին[3]: Պետք է ասել նաեւ, որ այդ փաստաթղթերի մասին առանձին ուսումնասիրություն հրապարակի վրա չկա, եւ դրանց մեծ մասը կարիք ունի համակարգման, թվայնացման, ուսումնասիրման:

2000-2002 թթ. Երուսաղեմի պատրիարքարանում աշխատելու տարիներին տողերիս հեղինակը պատեհություն է ունեցել առնչվելու դիվանական այդ փաստաթղթերից մի քանիսի հետ: Այդ ժամանակ պատրիարք Թորգոմ արք. Մանուկյանի[4] տնօրինությամբ եւ արխիվի պատասխանատու հոգեւոր հայրերի մասնակցությամբ թվայնացվեցին որոշակի թվով ձեռագրեր (տետրեր, թղթեր), որոնք տվյալներ են պարունակում հատկապես ուշ միջնադարի ֆերմանների, հրամանագրերի, կալվածական փաստաթղթերի, նվիրատվությունների մասին. դրանք, ըստ էության, ուժը կորցրած չլինելու շնորհիվ՝ արդիական ու գործածական կարող են լինել նաեւ այսօրվա իրավական ինչ-ինչ հարցեր պարզաբանելիս, այդ թվում՝ պետական իշխանությունների ատյաններում: Մասնավորապես մեր կողմից վերծանվել եւ համակարգչի մեջ են մուծվել չորս ձեռագիր տետրակների տեքստեր, որոնք ստեղծված են ԺԶ.-ԺԷ. դարերում եւ հիմնականում գրանցամատյաններ են, որոնցում համառոտակի, ժամանակագրական հերթականությամբ մեկ առ մեկ շարադրված է կարեւոր փաստաթղթերի բովանդակությունը:

Տետրերից մեկի տիտղոսաթերթն ունի հետեւյալ խորագիրը. «**Այս տէֆտէրս է յոյժ հարկաւոր ներկայ եղեալ պատրիարքին եւ խորհրդականաց, զի բոլոր ֆէրմանից եւ հէօճճէթից եւ պույրուլթուից յիշումն կայ գրեալ**»: Եւ ապա տետրակի 48 էջերին մեկ առ մեկ թվարկվում են 119 փաստաթղթերի վերնագրերը, եւ տրվում է դրանց համառոտ նկարագիրը: Ահա օրինակներ նման նկարագրություններից. «*Թէ ի Սուրբ Յարութիւն, թէ ի Սուրբ Ծնունդն, թէ ի Սուրբ Աստուածածնի գերեզմանն ուխտի եւ արարողութեան հայոց՝ ֆրանկներն հայոց մանի չեղնին: Ի տաճկաց սուլթան Օսման թագաւորէն հատոտի շէրիֆ մի, ի թուին տաճկաց ՌԼԱ.*» (1623 թ.): Կամ՝ «*Վասն նուիրակաց համար ֆէրմանք, որ թէպտիլ լինելն հաքիմք տաիլ չանեն, եւ վասն արեւելցի սեւագլխացն, որ ժողովուրդքն չնեղացուցանեն*»:

Կրկնենք՝ տետրակներում նկարագրված են միայն փաստաթղթերի կամ դրանք պարունակող պսակոցների (աչք) համառոտ բովանդակությունը, եւ ոչ թե բերված են փաստաթղթերը, սակայն այդ նկարագրություններն իսկ

3 Ի դեպ պետք է ասել, որ մեր ունեցած ստույգ տեղեկություններով հայերեն միջնադարյան անտիպ դիվանական հարուստ փաստաթղթեր են պահպանվում նաեւ Սպահանի (Նոր Ջուղայի), Լվովի, Վենետիկի, Մոսկվայի, Ամստերդամի տարբեր արխիվներում, որոնք նույնպես քննելու եւ հրատարակելու կարիք ունեն:

4 Երուսաղեմի հայոց պատրիարք 1990-2012 թթ.:

արժեքավոր տեղեկություններ են պարունակում միջնադարում հայոց պատրիարքության հեղինակության, իրավական բարձր կարգավիճակի, ունեցած հարաբերությունների, թագավորների եւ իշխանավորների կողմից ստացած անհերքելի հրամանագրերի մասին:

Երուսաղեմում պահվող փաստաթղթերի ամբողջական նկարագրումը եւ ուսումնասիրումը թողնելով ապագային՝ միայն նշենք, որ տետրակներից մեկում պահպանվել է մի համառոտ ժամանակագրություն հայ պատրիարքների մասին: Այն գրված է նեղ ու երկար (մոտ 15x40 սմ) տետրի վերջին էջերին, ընթեռնելի ձեռագրով եւ կրում է հետեւյալ խորագիրը. «**Այսոքիկ են թիւք Պատրիարքաց Սրբոյ Աթոռոյս, որ ի գաղափարէ միոյ Քարոզգրքէ առաք, որ էր ի Պատրիարքարանն**»:

Բնական կլինի ենթադրել, որ այս ժամանակագրությունն արտագրվել է հատկապես Երուսաղեմում պահվող մի «Քարոզգրքից», ինչպես որ վերնագիրն է հուշում: Երուսաղեմի հայոց Ս. Հակոբ մայրավանքի Մատենադարանում պահպանվում են մոտ չորս հազար ձեռագրեր, որոնցում նշված ժամանակագրության հնարավոր սկզբնաղբյուրի մեր որոնումներն ահա ինչ աղյուսքի հանգեցրին: Ձեռագրացուցակում[5] «Քարոզգիրք» խորագրով տասնյակ ձեռագրերի նկարագրություն կա, սակայն դրանցից որեւէ մեկը մեր բերած վերնագրով ժամանակագրություն չի պարունակում: Փոխարենը երկու այլ (ոչ «Քարոզգիրք») ձեռագրերում հանդիպում ենք պատրիարքների ժամանակագրական ցանկերի, որոնք ձեռագրացուցակը կազմող Նորայր արք. Պողարյանը զետեղել է ձեռագրացուցակներում: Դրանցից առաջին ձեռագիրն անթվակիր Ժողովածու է, որի վերջին՝ 437-458 էջերին ձեռագրից տարբերվող գրչագրով արտագրվել է *«ՉԿԷ. թուին յԵրուսաղէմ հայրապետ տէր Դաւիթ ամս ԽԷ.»* սկիզբն ունեցող համառոտ ժամանակագրությունը: Երկրորդը 1713 թ. ստեղծված «Մաշտոց» է, որի 172-179 էջերին նախորդից աննշան տարբերություններ ունեցող ժամանակագրություն է[6]: Սակայն այդ երկու ժամանակագրություններն էլ հենց առաջին տողերից տարբերվում են մեր քաղած բնագրից, եւ մեր նշած ժամանակագրությունն ունի նաեւ շահեկան հավելումներ, տարբերություններ: Օրինակ՝ ձեռագրացուցակի ժամանակագրության մեջ հետեւյալ հատվածին՝ *«ՌԺԱ. թուին տէր Աստուածատուր ամս Ժ.: ՌԻԱ. թուին տէր Աստուածատուր եւ տէր Անդրէաս Ի. եւ ինն ամիս»*, հաջորդում է *«ՌԾ. թուին Գանձակեցի Գրիգոր Պարոնտէրն...»*: Մինչդեռ մեր ժամանակագրության մեջ նույն տողին հաջորդում է մեկ այլ հատված՝ *«ՌԻԹ. 1580 Սահակ Արքեպիսկոպոս...»*: Մեր քաղած բնագրում առավել մանրամասն է նկարագրված Գրիգոր Շղթայակիր պատրիարքի գոր-

5 «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», կազմող՝ Նորայր արք. Պողարեան, հտ. Ա.-ԺԱ., Երուսաղէմ, 1966-1992:

6 Տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հտ. Գ., էջ 600-604, հտ. Է., էջ 436-439:

ծունեությունը, սակայն այն սկսվում է 1720 թվականով, որը Շղթայակրի՝ Կ. Պոլսից Երուսաղեմ գալու եւ ոչ թե նրա գահակալության տարեթիվն է:

* * *

«Թիւք պատրիարքաց» ժամանակագրության մեջ պատրիարքների թվարկումը սկսվում է ԺԴ. դարասկզբին գահակալած Սարգիս պատրիարքից: Պատմությունից հայտնի է, որ վերջինս անհամաձայն լինելով Հայ Եկեղեցու՝ Սիսի հինգերորդ եւ Աղանայի ժողովների որոշումներին եւ դրանք մեր Եկեղեցու համար անընդունելի համարելով՝ դիմել է Եգիպտոսի ամիրապետին եւ Ս. Հակոբի աթոռի համար ինքնավար կարգավիճակ ստացել: Ահա այս իրադարձությունն է համարվում միջնադարում հայոց Ս. Հակոբ միաբանության եւ պատրիարքության նոր պատմության սկիզբը: Այսինքն՝ հրապարակվող ներկա ժամանակագրության սկիզբը՝ 1311 թվականը, ոչ մի դեպքում չպետք է դիտարկել իբրեւ Երուսաղեմի հայոց միաբանության սկզբնավորության թվական, այլ՝ պատրիարքությունը Սսի կաթողիկոսությունից վարչական իմաստով անկախանալու ժամանակ: Բնական է, որ Կիլիկիայի հայոց թագավորության հարեւանությամբ գործող պատրիարքությունը պետք է գտնվեր Կիլիկիայում նստող Ամենայն հայոց կաթողիկոսության ազդեցության ներքո, սակայն 1311 թվականից ի վեր, ինչպես պատմական աղբյուրներն ու նաեւ այս ժամանակագրությունն են հուշում, Երուսաղեմի պատրիարքության համար սկսում է մի նոր՝ հարաբերական ինքնուրույնության ժամանակաշրջան: Հնարավոր է նաեւ՝ դրան աջակից են եղել Կիլիկիայի հայոց արքաների հետ մրցակցող եգիպտական տիրակալները՝ փորձելով նպաստել Երուսաղեմի հայերին Կիլիկիայից անջատելու ձեռնարկումներին:

«Թիւք պատրիարքաց» համառոտ ժամանակագրությունը պարունակում է Երուսաղեմի հայ 44 պատրիարքների մասին ժամանակագրական տվյալներ: Այն սկսվում է, ինչպես ասվեց, 1311 թ. աթոռակալած Սարգիս եպիսկոպոսով եւ ավարտվում 1860 թվականով, երբ վախճանվել է Հովհաննես Զմմառացի պատրիարքը, սակայն վերջինիս հաջորդած պատրիարքի մասին որեւէ խոսք չի ասվում: Ըստ այդմ՝ հստակ կարելի է ենթադրել, որ «Թիւք պատրիարքաց» ժամանակագրությունը ինչ-որ սկզբնաղբյուրից արտագրվել, լրացվել եւ ավարտվել է հենց 1860 թ.: Հավանական է, որ ժամանակագրական այս շարքը շարունակաբար արտագրվող եւ լրացվող ընթացք է ունեցել, ամեն մի ընդօրինակող եւ արտագրող իր ժամանակի նոր տվյալներն է հավելել, որից եւ ի հայտ են եկել ժամանակագրությունների մի քանի տարբերակներ:

Հաշվի առնելով, որ «Թիւք պատրիարքաց» համառոտ ժամանակագրությունը որոշ նոր տվյալներ է պարունակում մեր Եկեղեցու նվիրապետական աթոռներից մեկի մասին՝ նպատակահարմար ենք գտնում հրատարակել ժամանակագրական ցանկը՝ քաղելով Երուսաղեմի հայոց պատրիարքության

արխիվում պահպանվող ձեռագիր տետրակից: Բնագրին գրեթե չենք միջամտել: Որոշ դեպքերում տողատակում համադրել ենք Մ. Օրմանյանի եւ Մկ. Աղավնունու կազմած՝ Երուսաղեմի հայ պատրիարքական գավազանագրքերի տվյալների հետ: Դյուրին է նկատել, որ երբեմն այդ տվյալները տարբերվում են միմյանցից: Ժամանակագրության մեջ մեկ-երկու դեպքերում պատրիարքների ժամանակագրական հերթականությունը խախտված լինելով՝ տեղադրել ենք ըստ ժամանակագրական հերթականության: Ձեռագիր տետրակը գրված է սեւ մելանով, ընթեռնելի ձեռագրով, թվականները եւ անունները կարմիր մելանով են, հաճախ թվականների վրա արտագրողը դրել է հարցական նշաններ, որոնք մենք պահպանում ենք:

ԱՅՍՈՔԻԿ ԵՆ ԹԻՒՔ ՊԱՏՐԻԱՐՔԱՑ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ

ՉԿ. (1311). **Սարգիս** Եպիսկոպոս ամս Բ.[7]:
ՉԿԳ. (1314). **Աստուածատուր** Եպիսկոպոս ամս Ը.[8]:
ՉԿԷ. (1318). Նստաւ Պատրիարք Տէր **Դաւիթ** ամս ԽԷ.:
ՊԴ. (1355). Տէր **Վասիլ** ամս Է.:
ՊԺ. (1361). Տէր **Գրիգոր**[9] եւ Տէր **Մկրտիչ** ամս Դ.[10]:
ՊԺԴ. (1365). Տէր **Մկրտիչ** ամս ԻԹ.:
ՊԺԵ. (1366). Տէր **Յոհան** Լեհացին ամս Դ.[11]:
ՊԽԵ. (1396). Տէր **Գրիգոր** Մսըրցին ամս Դ.[12]:
ՊԽԷ. (1398). Տէր **Սարգիս** ամս Զ.:
ՊԽԸ. (1399). Տէր **Սարգիս** ամս ԺԸ.[13]:

---

7 Մինչեւ 1311 թ. Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը գտնվել է Կիլիկիայի հայոց թագավորների եւ Սիսում նստող Հայոց կաթողիկոսների իշխանության ներքո: Չընդունելով Օշին թագավորի, Գրիգորի Է. Անավարզեցի եւ Կոստանդին Գ. Կեսարացի կաթողիկոսների լատինամետ քաղաքականությունը եւ չենթարկվելով 1307 թ. Մսի ժողովի որոշումներին՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարք Մարգիսը, Հայ Եկեղեցու վարդապետությունը անաղարտ պահելու համար, Եգիպտոսի սուլթանից հրովարտակ ձեռք բերելով, անջատել է իր Աթոռը Կիլիկիայի քաղաքական եւ եկեղեցական իշխանությունից: 1311 թ. Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը դարձել է անկախ:

8 Ըստ Մկ. Աղավնունու՝ Աստվածատուրը գահակալել է 1313-1316 թթ.:

9 Հայագիտությանը հայտնի է ԺԳ. դարի Երուաղեմի հայ պատրիարք Գրիգորի անվամբ պահպանված երկու աշխատություն՝ «Մկիզբն իմաստասիրութեան» (պահպանվում է Փարիզի ազգային մատենադարանում) եւ «Մահմանք զանազան, արտորոշեալք ըստ Սրբոց եւ ծայրագոյն վարդապետաց»: Թերեւս պետք է ենթադրել, որ այս իմաստասեր Գրիգոր Պատրիարքը «Թիւք պատրիարքաց»-ում հիշատակված Գրիգոր պատրիարքն է. տե՛ս **Նորայր Պողոսեան**, Երուսաղէմի հայ գրչութեան կենտրոնը 14-րդ դարում. «Սիոն», 2002, էջ 64-72:

10 Ըստ Մկ. Աղավնունու՝ Մկրտիչը գահակալել է 1358-1366 թթ.:

11 Ըստ Մ. Օրմանյանի՝ Հովհաննես Լեհացին գահակալել է 1378-1386 թթ.:

12 Ըստ Մկ. Աղավնունու՝ գահակալել է 1385-1390 թթ.:

13 Գրասեր լինելով՝ պահպանվել են Սարգիս պատրիարքի ընդօրինակած մի քանի գրչագիր ձեռագրեր: Դրանցից մեկը, օրինակ՝ «Մեկնութիւն կաթողիկէ թղթոց Սարգսի Շնորհալւոյ», պահվում է Երուսաղեմի հայոց Ս. Հակոբ ձեռագրատանը: Հին հրամանագրերում 1399 թ. հիշ-

ՊԿԶ՛. (1417). Տէր **Պօղոս** ամս Բ.: Սա ետես ի մէջ Սրբոյ Յակոբայ ամենայն պատկերք խոնարհեալք երկրպագին, յորժամ Գաբրիէլ հրեշտակապետի պատկերն ողջոյն ետ Սուրբ Աստուածածնի պատկերին յաւուրս տօնի Աւետեաց Սրբոյ Կուսին, սա գրեալ կայ ի մէջ Յաամաւուրքին Ապրիլի Է.:

ՊԿԸ. (1419). Տէր **Մարտիրոս** Մսըրցին ամս Ե.: Սա Սուրբ Աստուածածնայ տանիսն նորոգեաց եւ կամարն եւ դուռն վերստին նորոգեաց: Ի սորա ժամանակն առաւ Սուրբ Գողգոթայն ի ձեռաց մերոց Մսըրայ սուլթանն Մէլէք Աշրաֆն եւ ետ ի վրաց անհաւատ ազգին, կախարդութեամբ յումեմն վրացի վաճառական Իւանէ անուն կոչեցելոյ:

ՊՀԳ. (1424). Տէր **Եսայի** ամս Է.[14]:

ՊԶ. (1431). Տէր **Յոհաննէս** ամս Ժ.[15]:

ՊՂ. (1441). Տէր **Աբրահամ** ամս ԺԳ.: Ի սորին տասնհինգ ամին օսմանցին Ստամպօլն առաւ:

ՁԳ. (1454). Տէր **Մեսրովբ** ամս Է.[16]:

ՁԺ. (1461). Տէր **Պետրոս** ամս ԺԲ.:

ՁԺԲ. (1463). Տէր **Պետրոս** ամս ԺԳ.:

ՁԻԵ. (1476). Տէր **Մկրտիչ** ամս ԻԵ.: Ի սորա ժամանակն սուլթան Սէլիմն զՍուրբ քաղաքն Երուսաղէմ էառ եւ շրջապատն պարսպեաց[17]:

ՁԾ. (1501). Տէր **Պետրոս** ամս ԻԵ.: Ի սորա ԺԳ. ամին զՍրբոյ Յակոբայ մէջն ծեփեաց եւ սպիտակացոյց եւ զջառներն սալեաց եւ այլ բազում երախտիս արար ի Սուրբ Աթոռս:

ՁՀԲ. (1523). Միտնեցի Տէր **Աստուածատուր** ամս ԻԸ.[18]:

Ռ. (1551). Տէր **Աստուածատուր** ամս ԺԱ.:

ՌԺ. (1561). Տէր **Աստուածատուր** ամս Ժ.:

ՌԻԱ. (1572). Տէր **Աստուածատուր** եւ Տէր Անդրէաս ամս քսան եւ ինն:

ՌԻԹ. (1580). **Սահակ** Արքեպիսկոպոս, սա գտաւ ի ժողովին զոր գումարեաց Գրիգոր Կաթողիկոս վասն միաբանութեան ընդ եկեղեցւոյն յունաց, յորում ամի մեռաւ եւ Կիռ Մանուէլ կայսրն յունաց:

ՌԾ. (1601). Գանձակեցի **Գրիգոր** Պարոնտէր: Սա նոր ազատիչ եղեւ Սըրբոյ Աթոռոյն Յակոբայ, վերստին նորոգեաց, ԽԸ. հազար ղուրուշ պարտքն ետ եւ ազատեաց եւ շատ դրամ եթող, զՍուրբ Ծնունդն նոր նորոգեաց եւ այլ

վում է նաեւ Մարտիրոս աթոռակից պատրիարք:

14 Մկ. Աղավնունին այս Եսայի պատրիարքի գահակալությանը հատկացնում է երկու տարի միայն՝ 1430-1431 թթ.:

15 Գահակալել է 1441-1445 թթ.:

16 Աղբյուրներում Մեսրոպ պատրիարքին աթոռակից է հիշատակվում Տեր Աբրահամը:

17 Մկ. Աղավնունին Մկրտիչ Իլովեցու գահակալության թվականները համարում է 1476-1485, Մ. Օրմանյանը՝ 1476–1479:

18 Աստվածատուր Մերտինցի, ըստ Մկ. Աղավնունու՝ 1532-42 թթ.:

բազում երախտիս արար քան զամենեսեան, որ յառաջ քան զայս եկին եւ կալաւ զԱթոռ հայրապետութեան ամս ԽԴ.:

ՌՀԱ.՞ (1622). Տէր **Դաւիթ** ամս ԺԵ.[19]:

ՌՃԻ.՞ (1671). Տէր **Աստուածատուր** ամս ԼԹ.[20]:

ՌՃԻԷ.՞ (1678). Տէր **Եղիազար**, որ յետոյ եղեւ Կաթողիկոս Սրբոյ Աթոռոյն Մեծի Էջմիածնի, ուր ի ՌՃԼ.-ին գնաց եւ ի ՌՃԽ. Օգոստոսի 18-ին վախճանեցաւ[21]:

ՌՃԽԷ. (1698). Տէր **Յոհան** ամս Ը.:

ՌՃԾԳ. (1704). Տէր **Մինաս** ամս Ջ.[22]: Վախճանեցաւ եւ յետ սորա նոյեմբերի 24-ին անկաւ Սուրբ Աթոռս ի ձեռս վանաց վէքիլն[23] նստէին, փոխանակ շինութեան բազում վիշտ եւ նեղութիւն հասուցին, Սրբոյ Աթոռոյն պարտքն դիզեցաւ մինչ ԷՃ. քսակ աւելի, իսկ զարդք եւ սպասք եւ անօթք Սրբոյն Յակոբայ բնաւ ոչ գոյր, զի զոր ինչ եւ լեալ էր ի հնոց ժամանակաց զամենն վաճառելով եւ գրաւ դնելով վատնեալ էին՝ թէ խաչ եւ զսկիհ եւ զբուրվառ եւ զշուրջառ ի ձեռս այլազգեաց եւ այլ եւս ինչք, մինչ որ յետին թշուառութիւնք կրէին միաբանքն ի ձեռս պարտատերաց, վասն որոյ միահաղոյն զազգս հայոց որ ի մեծ քաղաքին Բիւզանդիոյ խորհեցան խորհուրդ բարի վասն առն Աստուծոյ Գրիգորի Աստուածաբան վարդապետին, որ էր առաջնորդ Սրբոյ Յովհաննու Կարապետին որ ի Տարօն կոչեցեալ վասն որոյ ամենայն ազգս հայոց իշխանք եւ ռամիկ մեծամեծ եւ փոքունք հաճեալ եւ հաւանեալ եդին Պատրիարք Սրբոյ Աթոռոյս Երուսաղէմի եւ Մեծի գահին Յակոբայ Առաքե-

19 Ըստ այս ժամանակագրության՝ Գրիգոր Պարոնտերը գահակալել է 44 տարի՝ 1601-1645 թթ., եւ ուրեմն նրա հաջորդ Դավիթը չէր կարող 1622 թ. պատրիարք լինել: Թերեւս Դավիթի գահակալության թվականը պետք է ուղղել ՌԻԱ., որը մոտ կլինի Մ. Օրմանյանի ցուցակի 1582-1583 թվականներին: Առհասարակ ժամանակագրության մեջ այս շրջանի համար առկա է շփոթ:

20 Աստվածատուր Տարոնեցին, որ Գրիգոր Պարոնտերի աշակերտն էր, գահակալել է նրանից անմիջապես հետո՝ 1645ից: Գահընկեց լինելուց հետո վերահաստատվել է իր պաշտոնին 1650 թ.: Վախճանվել է 1671 թ., որը եւ բերված է ժամանակագրության մեջ:

21 Եղիազար Այնթապցին 1664 թ. Երուսաղեմում հաստատել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին հակաթոռ կաթողիկոսություն՝ իրեն երթարկելով Օսմանյան տերության տարածքում գործող եկեղեցական թեմերը: Եղիազար Ա. Այնթապցու՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելուց հետո 1682 թ. Երուսաղեմի կաթողիկոսությունը վերացվել է: Միեւնույն ժամանակ Եղիազարին ընդդիմացած Մարտիրոս Ղրիմեցին Կ. Պոլսում իրեն հռչակել էր պատրիարք Երուսաղեմի եւ այդ պաշտոնին է նշանակվել 1682ին՝ Եղիազարի կաթողիկոս ընտրվելուց անմիջապես հետո:

22 Ըստ Մկ. Աղավնունու՝ 1703 թ. (կամ գուցե 1704) Մինաս Ամդեցու մահվան թվականն է, նա գահակալել է 1698-1703 թթ.: Իսկ մինչ այդ Մինասը եղել է Հովհաննես պատրիարքի աթոռակիցը: Մինաս Ամդեցին է առաջինը «Նարեկը» հրատարակել մի քանի ձեռագրերի համեմատությամբ (Կ. Պոլիս, 1701 թ.):

23 1702 թ. Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Ավետիք Եվդոկացին զբաղեցրել է նաեւ Երուսաղեմի Հայոց Պատրիարքության աթոռը, եւ մինչեւ 1715 թ. Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունը կառավարել են Կ. Պոլսից նշանակված փոխանորդները: Պատրիարքությունն ընկել է պարտքերի տակ: Այդ դրությունը վերացրեց եւ 1715 թ. Երուսաղեմի պատրիարքության ինքնուրույն կարգավիճակը վերահաստատեց Կ. Պոլսի Պատրիարք Հովհաննես Կոլոտ Բաղիշեցին:

լոյն, եղեւ գալուստ առն Աստուծոյ Տեառն Գրիգորի Հայրապետին ի Սուրբ Աթոռս Սրբոյն Յակոբայ:

ՌՃԾԳ. (1704). Ի միջոցի ԺԳ. տարւոյ Կայծակ Գալուստ Սահակ, Կեճճէ-ցի Յովհաննէս պատրիարգունք Պոլսոյ, որոց վէքիլքն յԵրուսաղէմ[24]:

ՌՃԿԹ. (1720). Ի ՌՃԿԹ. Տէր **Գրիգոր** այրն Աստուծոյ նստաւ Պատրիարք առաքելաշնորհ Սրբոյն Աթոռոյն Յակոբայ եւ օր յաւուր նորոգեալ հաստատէր զՍուրբ Աթոռն, որով եւ ամենայն կարգ եւ կրօնք հաւատոյս քրիստոնէութեան, վասն որոյ ել համբաւ ազատութեան պարտուցն եւ նորոգման Սրբոյ Աթոռոյս հռչակեալ տարածեցաւ առ ազգս հայոց՝ թէ յարեւելս եւ թէ յարեւմուտս, որով ուրախութիւն լինի ոչ սակաւ: Արդ յառաջ քան զԳրիգոր Վարդապետն բազում վարդապետք պայծառացուցեալ էին եւ շէն պահեալ, այլեւ ի ներքոյ պարտուց անկեալ էին բազումք ի նոցանէ, որպէս յայտ է ի պատմութենէ Պարոնտեառն Գրիգորին՝ ԽԸ. ղուրուշ պարտքն տուեալ է եւ բազում դրամ թողեալ է, բայց Սրբազան Վեհս Տէր Գրիգոր Վարդապետն երկրորդ Լուսաւորիչ եղեւ ազգիս հայոց եւ Սրբոյ Աթոռոյս Յակոբայ ըստ ասելոյն Սողոմոնի՝ «Բազումք ստացան մեծութիւնք, բազումք արարին զօրութիւնք, բայց դու առաւել եդեր եւ անցուցեր զամենեսին»[25]: Բայց յաջողութեամբ Տեառն Աստուծոյ յամենայն պարտուցն ազատեաց զՍուրբ Աթոռն եւ պայծառակերպ եւ շքեղապանծ անպատմելի զարդիւք զարդարեաց, ի մէջ տաճարին բոլորատիպ չինիով պատեաց եւ ոսկեզօծս զարդարեալ երանգ-երանգ գունովք նկարակերտութեամբ Սրբովք պատկերովք տեսողաց զարմանալի եւ լեզու մարդկանց անպատմելի, այլ եւ նորոգեաց զՍուրբ Ծնունդն խարանազգեաց վարդապետօք եւ պարկեշտ աբեղայիւք, այլ նորոգեաց զՍուրբ Թեոդորոս եկեղեցին, զոր յառաջ կարի փոքր մատուռ էր եւ սա վերստին նոր նորոգեալ վերացոյց Գ. Սուրբ խորանօք[26], այլ եւ Սուրբ Հրեշտակապետն պայծառացոյց յայտ իսկ է, նոյնպէս Սուրբ Փրկիչն անպատմելի զարդիւք զարդարեաց, ի մէջ Սուրբ Յարութեան նոյնգունակ հրաշալի զարդիւք զարդարեաց, համառօտ գրեցաք: Իսկ գերահռչակ բարձրագահ Սուրբ Աթոռս Յակոբայ սովաւ առաւել հաստատեցաւ եւ փարթամացաւ եկեղեցականաւ, անօթով ոսկով եւ արծաթով եւ մեծագնիւք զգեստիւք, նոյնպէս մարմնաւորօք սպասիւք եւ կահիւք պղնձեղինօք եւ այլ բազում այսպիսեօք այլ եւ բազմազանիւ կերպիւ հոգեւորաւ եւ մարմնաւորաւ արդեամբ օգտակար լինի Սրբոյ Աթոռոյս գեղեցիկ

24 Մինաս Ամդեցուց հետո պաշտոնավարած «վեքիլների» շարքում Երուսաղեմի պատրիարք տիտղոսով հիշատակվում է նաեւ Ավետիք Երզնկացին: Այդ մասին հիշում է ինքը՝ Ավետիքը, իր ինքնակենսագրության մեջ. տե՛ս «Արարատ», 1874:

25 Առակք ԼԱ. 29:

26 Գրիգոր Շղթայակրի կողմից բազում վերաշինություններ կատարելու եւ հայոց միաբանության վերազարթոնքի այս նկարագրության մեջ հիշատակվում է նաեւ Ս. Թեոդորոս եկեղեցու նորոգությունը. այդ ժամանակ (1720-ական թթ.) է հենց Գրիգոր Շղթայակիր պատրիարքը Ս. Թեոդորոս եկեղեցում հաստատել Գրատունը, որը Երուսաղեմի Մատենադարանի հիմնադրման թվականը պետք է համարել:

յարմարութեամբ եւ ախորժ տեսողաց եւ ապա ի միջնատունս եւ ապարանս ի բնակութիւն տէրունական ուխտաւորաց ազգիս հայոց, որ եւ հանապազ յղանայ եւ ծնանի ամենայն բարի եւ օգուտ Սրբոյ Աթոռոյս հաւան զամենայն առաւել պայծառացոյց Սուրբ Աթոռս եւ արար բազում երախտիս, ոչ յառաջ արարին եւ ոչ յետոյ առնելոց են, որ եւ ազգս ամենայն միահաղոյն հայցեն ի Տեառնէ, զի երկար ամօք պահեսցէ զսա յուրախութիւն սրտից մերոց ի փառս անուան իւրոյ ամէն, վասն որոյ ասէ Սողոմոն՝ «Բազումք ստացան մեծութիւն, բազում արարին զօրութիւնք», բայց սա առաւել քան զամենեսին արդիւնաւորեցաւ[27]: Որ հանգեաւ ի ՌՃՂԸ.:

-- Տէր **Յակովբ**[28] Զմառցին աշակերտ Տեառն Յովհաննու Աստուածաբան Պատրիարքի Կոստանդնուպօլսոյ ամ եւ կէս նստաւ եւ յետոյ իւր կամաւն հրաժարեալ ընդ Եաղուպ աղային գնաց ի Կոստանդնուպօլիս եւ վերստին եղեւ Պատրիարք Մեծին Պօլսոյ, նախ քան զգալուստն սորա զկնի վախճանման Գրիգորի Մեծի Պատրիարքին Սրբոյ Աթոռոյս Զ. ամիս ամայի մնաց, մինչ ի գալուստն Յակովբայ, սորա գալն եւ թողուլ գնալն Սրբոյ Աթոռոյս շատ վնաս եղեւ որ եւ ես ականատես իսկ եմ:

-- Տէր **Թեոդորոս**[29] Տարօնեան Խորենացի ամս Ժ.: Յաւուրս սորա եղեւ վէճն յունաց ընդ լատինացւոց վասն տեղեաց Սրբոյ Բեթղեհէմի, Սրբոյ Աստուածածնայ լուսընկալ գերեզմանին եւ այլոց տեղեաց, որք առին ի լատինացւոց որ եւ մեզ ցաւ հասուցին ոչ սակաւ ի կողմանէն Սրբոյ Աստուածածնայ, այսու պատճառաւ մեք եւս հրամանաւ մեծազօր արքային մուպաշիր բերել տուաք կտրուկ եւ զօրեղ հատտի շէրիֆով եւ ընդ յոյնս մաքառեցաք: Բայց յունաց գոռոզ ազգն մեր առաջնալոյն տանել ոչ կարացին վերստին արքունական գիր հանեցին եւ մեր մեծազօր եւ աստուածասէր Իշխանքն գյունաց գիրն փոխել ետուն հրամանաւ մեծազօր արքային: Եւ այլ իմն գիր մերս արքունական գրի միւճիւպովն յետ եկ յառաջ մեզ խարճ եղեւ ՃԿ. քէսէ, զոր Տէր Յիսուս զմեզ նոցա շառէն ազատեսցէ: Նաեւ երանելի հայրն մեր եւ Պատրիարք Սրբոյ Աթոռոյս ունի եւ այլ բազում երախտիս ի վերայ Սրբոյ Աթոռոյս. Սուրբ Ծննդեան բոլոր տանիսքն պալատ արար եւ Սրբոյ Երրորդութեան պարտիզի կողմի պատն նոր նորոգեցաւ, նաեւ ի մէջ քաղաքիս մեր վանուց մերձ հիւսիսային կողմի Ապտլ Հիւտայի տներն եւ պատնեշն գնեաց Սրբոյ Աթոռոյս դրամովն, այլեւ մերձ վերոյ գրեալ պարտիզին մերձ տունն որ կոչի Սառայի տուն նոր հիմ դնելով վերստին շինեաց բազում ծախիւք, այլ եւ Սրբոյ Աթո-

27 Տե՛ս ծան. 25:

28 Այս եւ հաջորդ պատրիարքների դեպքում ժամանակագրության մեջ թվականները բացակայում են: Հակոբ Նալյան Զմմարացին Երուսաղեմի պատրիարք է եղել 1749-1751 թթ.:

29 Ըստ Մկ. Աղավնունու եւ Մ. Օրմանյանի՝ Թեոդորոսը պատրիարքական աթոռին գահակալել է 1752-1761 թթ.: Նրա օրոք մեկ անգամ եւս վերահաստատվել է հայերի՝ Հիսուսի Զատկի ճրագալույցի լուսահանության օրը հույների հետ հավասար Մ. Գերեզման մտնելու իրավունքը, որը պահպանվում է մինչ օրս:

ռոյս մէջն շինութիւն շատ, բայց ես աստ զգլխաւորս գրեմ Սուրբ Էջմիածնայ, Սուրբ Թորոս եկեղեցւոյ տանիսքն եւ միջի ջինին գաւթի Աբեղաթաղի, տնտեստանն, պատրիարքարանի եւ Սրբոյ Յարութեան Լուսաւորչայ, զայս վերոյ գրեալ տանեաց բոլորն պալատ արար, յաւել եւս Սուրբ Հրեշտակապետու դրան դիմացի պարտիզի պատն մինչ ի բերդի Սրբոյ քաղաքի դրան մերձ անկիւնք խոշոր քարերով շինել ետ գրէթ Զ. քէսէ եւ կէս խարճ եղեւ որ վերակացուն ես՝ *Խուչունչանցի Գաբրիէլ եպիսկոպոս* էի, ժամանակս նորապսակ սրբազան Վանեցի Պօղոս արժանավայել Պատրիարքին եղէ վէքիլ Սրբոյ Աստուածեան Աթոռոյս: Հուսկ յետոյ Թեոդորոս Պատրիարքն հանգեաւ ի Տէր Դեկտեբերի Է., զոր Տէր Յիսուս ընդ սրբազան Հայրապետացն դասեսցէ եւ երկնային լուսով լուսաւորեսցէ, ամէն:

ՌՄԺԱ. (1762). Ի ՌՄԺԱ. ապրիլ ԺԱ. Կենճեցի Տէր **Կարապետ** (աշակերտ Տեառն Թեոդորոսի առ Տէր հանգուցելոյն) որ եւ սա վախճանեցաւ ի ՌՃԺԷ. յունուարի ԻԵ., որ զհոգին Տէր լուսաւորեսցէ, վասն յոյժ սրտացաւ էր ի վերայ Սրբոյ Աթոռոյս, զոր Սրբոյ Աթոռոյս մնացեալքն եւ Սուրբ Յակոբայ եկեղեցւոյն տանիսն սալեաց, այլ եւս հին հաւու տունն ԺԲ. օտայ շինեաց ի հիմանէ, որ այժմ կոչ, Իզմիւռնոյ թաղ, որ Տէր Յիսուս վարձահատոյց լիցի:

ՌՄԺԷ. (1768). ՌՄԺԷ. Ապրիլ ԺԲ. Տէր **Պօղոս** Վանեցի (որ սա եւս էր աշակերտ Տեառն Թեոդորոսի Խորենացւոյ Սրբոյ Աթոռոյս Պատրիարքի առ Տէր հանգուցելոյ), որ եւ սա ի ՌՄԻԴ. եւ ի Մայիսի ԺԸ. վախճանեցաւ եւ թաղեցաւ ի նոյն օրն եւ ի կենդանութեան յոլով նեղութիւն կրեաց ի Յոպպէ եւ ի Ռէմլէ եգիպտացւոց զօրքն թալլեցին Զ. միաբան եւ վեց ուխտաւոր արտաքոյ Յոպպէու նահատակեցին, որոց հոգիքն Տէր լուսաւորեսցէ եւ ընդ երանելի նահատակացն դատեսցէ յերկնից արքայութեան իւրում, ամէն:

ՌՄԻԴ. (1775). Վերոյ գրեալ ի ՌՄԻԴ. եւ Հոկտեմբերի Ե. նստաւ Պատրիարք Քանաքեռցի Տէր **Յովակիմն**, որ եւ տեւեաց ի պատրիարքութեան զամս ԻԸ. եւ վախճանեցաւ ի ԽԲ. ամին ի Մեպտեմբերի ԻԵ.-ին, օրն Վարագայ խաչի կիւրակէին եւ թաղեցաւ յերկուշաբթի, որոյ Տէր լուսաւորեսցէ զհոգի իւր, ամէն[30]:

ՌՄԽԴ. (1795). Ձկնի սորա յաջորդեաց ի թիւ ՌՄԽԲ. Եւդոկացի **Պետրոս** Արքեպիսկոպոսն ի պատրիարքութիւն, ի լուսաւորութենէ եղեւ բարձրացեալ եւ տեւեաց Է. ամ, բայց վախճան սորա առ Աստուած եղեւ ի Յոպպէ ի ՌՄԽԹ. Յունիս ԺԸ., քանզի ի ժամանակս քեռ Եուսուֆ փաշային (որ եկեալ էր ի Պօլսոյ ի վերայ գաղղիացւոց տիրողացն Եգիպտոսի եւ կողմանցս եւն) վասն սաստիկ նեղութեան եւ տառապանացն Սրբոյ Աթոռոյս Իջեալ զօգնութիւն գտանել ի ձեռն Ակնեցի Չօփենց սառաֆ բարեպաշտօն մահտեսի Անտոն ամիրային անդ վճարեաց զկեանս եւ գերեզմանն նորա կայ ի մեր գերեզմա-

30 Հովակիմ պատրիարքը հայտնի է Ծովածին մականունով՝ կապված Հոպպե քաղաքի մոտ Ավետարանը ձեռքին ծովն ընկնելու եւ ապա ազատվելու պատմության հետ:

նատունն Յուպպէու: Իսկ ի 1837-ին փոխադրեցաւ ի գաւիթ Սուրբ եկեղեցւոյն Յուպպէի[31]:

ՌՄԾԱ. (1802). Յետ սորա յաջորդեաց Վանեցի Տէր **Թեոդորոս** Արքեպիսկոպոս նախկին դարպասընկալ ի թիւ ՌՄԾԱ. Յուլիս ԻԳ. յաւուր տօնի Վարդավառին: Թէպէտ յարքունուստ Բ. ամ յառաջ կարգեալ էր Պատրիարք, այլ նա ինքն առ խոնարհութեան վասն նեղութեան Սրբոյ Աթոռոյս ոչ յանձն առնոյր: Յաւուրս սորա եղեւ մեզ պատարագել եւ բաժանորդ լինիլ Սուրբ Աստուածածնայ գերեզմանին եւ Սուրբ Ծննդեան այրոյն յամենայն օր, նամանաւանդ զերծանիլն Սրբոյ Յակոբայ ի ձեռաց յունաց ջանացողութեամբ եւ մեծավաստակ մեծամարտութեամբ Ադրիանուպօլսեցի Պօղոս Արքեպիսկոպոսին ի Պոլիս վէքիլին, որ եւ յետոյ եղեւ Պատրիարք ի Պոլիս եւ ապա ինքնին ել յիշխանութենէ պատրիարքութեան եւ եւս ի սորին աւուրս եղեւ անօրինակ պատահումն վասն Սրբոյ Յարութեան տաճարիս, զի ի 1808 Հոկտեմբերի 12-ին հրով կիզաւ բոլորն եւ սպառեաց զամենայն սիւնս եւ զքարինս եւ յետոյ հրամանաւ սուլթան Մահմուտին շինեցին յոյնք (այրումն եղեւ ի ՌՄԾԷ. եւ շինումն ՌՄԾԸ.): Եւ տեւեաց իշխանութիւն սորա յԱթոռն տասնեւինն տարի եւ հանգեաւ ի Քրիստոս եւ թաղեցաւ ի Սուրբ Փրկիչ ի ՌՄԿԷ. թուին հայոց եւ ի ԻԲ.-ին Օգոստոսի:

ՌՄԿԸ. (1819). Զկնի սորա յաջորդեաց Նիկոմեդացի **Գաբրիէլ** Արքեպիսկոպոսն ի վէքիլութենէ ՌՄԿԸ. Օգոստոս Դ. ի պատրիարքութիւն: Յաւուրս սորա հեծեր եւ տագնապիւր Սուրբ Աթոռս ի ներքոյ ծանր պարտուց, քանզի փակեցան ճանապարհք տէրունական ուխտաւորաց ի պատճառս կռուոյն Մօռայու յունաց ընդ օսմանցւոց, մինչեւ անհնարին եղեւ հայթայթել զօրական ապրուստ վանուց, նմին վասն խորհրդով ազգապետաց հարկ եւ արժան դատեցաւ կոչիլ սորան ի Պոլիս:

ՌՄԿԸ. (1819). Յամի Տեառն 1819 օգոստոս յաջորդէ Տէր Գաբրիէլ Նիկոմիդացի եւ վախճանի յամի 1840 Ապրիլ 25[32]:

ՌՄՀԴ. (1825). Օգոստոս - Վասն թեթեւութեան պարտուցն տնօրինելոյ ինչ, որպէս եւ եղեւ թագսիտիւ վճարել ՁՌ. քսակ պարտուց առ այս գործ մուրախաս եւ[33]...

31 Պետրոս Եվդոկացու պատրիարքության ժամանակ են Նապոլեոն Բոնապարտի զորականները հանգրվանել Յաֆայի հայոց վանքում:

32 Այս միջոցին՝ 1833 թվականին է Մ. Հակոբյանց վանքում հիմնադրվել հայկական տպարանը: Այստեղ են տպագրվել մասնավորապես Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց» (1843 թ.), Եսայի Հասան-Ջալալյանի «Պատմութիւն Աղուանից երկրի» (1868 թ.) եւ այլ գրքեր:

33 Շարունակությունը ձեռագրում չկա:

ՌՄՂ. (1841). Տէր **Զաքարիա** Կորեցի, Պետրոս Վարդապետիւն որդւոյ Տէր Զաքարիա քահանայի յամի 1841 Հոկտեմբեր 24, հանգեաւ 1847 մայիսի 7[34]:

ՌՄՂԶ. (1847). Փետրվար 14 - Երուսաղեմացի Տէր **Կիրակոս** որդի Մնացականի, յորոյ աւուրն շինեցաւ Նոր թաղն հիմնարկեալ ի նախորդէ իրմէ Իլիմոն Պահճէսի կոչեցեալ տեղւոջ ընդ ճանապարհ Սուրբ Հրեշտակապետի եւ փորեցաւ հիմն միւս այլ թաղի հանդէպ վերնոյն եւ պատրիարքի պարտիզին, յորոյ վերայ ուսումնարան լինելոյ է: Սա երկար ժամանակաց քամի ունէր ի կուրծս, 1850 Մայիս 24 գիշերային ժամու ի լոյս 25-ին աւանդեաց հոգին:

ՌՄՂԹ. (1850). Յուլիս 4 - ընտրեցաւ Պատրիարք ի Կոստանդինուպօլիս փոխանորդ վէքիլն Աթոռոյս անտանոր Զմիւռնացի Տէր **Յովհաննէս** Մովսիսեան եւ եկն նստաւ յԱթոռ ի 11 Նոյեմբերի ի տօնին Սրբոց Հրեշտակապետաց իբրեւ ամաց վաթսնից: Շինեալ աւարտեաց զվերոյիշեալ թաղն յամի 1853 եւ զհոյակապ պատրիարքարանն իւրով հիմնարկութեամբ 1851 եւ աւարտեալ 1853 ու հանգեաւ 1860 դեկտեմբեր 24 յաւուր տօնի Դաւթի Մարգարէին եւ Յակոբայ Առաքելոյն:

* * *

Ժամանակագրական ցանկից բացակայող պատրիարքներ: «Թիւք պատրիարքաց» ժամանակագրության մեջ բացակայում են մի շարք պատրիարքների անուններ, որոնք հանդիպում են այլեւայլ աղբյուրներում: Ստորեւ ըստ թվականների ներկայացնում ենք այս ժամանակագրությունից դուրս մնացած պատրիարքների անունները:

1316-1321 թթ. Դավիթ:

1321-1331 թթ. Պողոս:

1321-1331 թթ. Վարդան Արեւելցի (չպետք է շփոթել պատմիչ Վարդան Արեւելցու հետ):

1332-1341 թթ. Հովհաննես Ճոսլին:

1349 թ. - մի կալվածագրում հիշատակվում է Կարապետ պատրիարք Երուսաղեմի:

1391-1394 թթ. Եսայի:

1479-1491 թթ. Հովհաննես Մսըրցի, Թավիլ մականունով:

1491-1501 թթ. Մարտիրոս Պուրսացի:

1507-1523 թթ. Սարգիս, որի ժամանակ Օսմանյան սուլթան Սելիմը 1517 թ. եգիպտացիներից գրավում է Երուսաղեմը եւ հին հրովարտակների վրա

34 Զաքարիա պատրիարքի օրոք եւ նրա ջանքերով 1843 թ. Ռեմլեի Ս. Գեւորգ վանքում բացվել է Ժառանգավորաց վարժարանը՝ Երուսաղեմի հայկական առաջին հոգեւոր կրթական գիշերօթիկ հաստատությունը: Հաջորդ տարի այն փոխադրվել է Երուսաղեմ եւ մինչ օրս արդյունավետ գործում է Պատրիարքարանի տնօրինության ներքո:

հենվելով՝ հատուկ հրամանով վերահաստատում Սարգիս պատրիարքի՝ Սուրբ տեղերում ունեցած իրավունքները: Մեր հիշատակարանը նույն փաստը վերագրում է 1476-ից գահակալած Մկրտիչ պատրիարքին, մինչդեռ հայտնի է, որ Օսմանյան Թուրքիան Երուսաղեմը գրավել է 1517 թ.:

1542-1562 թթ. Փիլիպպոս:

1567-1589 թթ. Անդրեաս Մերտինցի:

* * *

Ժամանակագրական ցուցակում տեղ գտած պատրիարքների եւ նրանց գահակալության ժամանակները համեմատելու համար ստորեւ ներկայացնում ենք Երուսաղեմի հայ պատրիարքների ցանկը՝ ըստ Մաղաքիա Օրմանյանի, մինչեւ 1860 թ., երբ ավարտվում է ձեռագիր ժամանակագրությունը: Դժվար չէ նկատել, որ շատ տեղերում Մ. Օրմանյանի եւ մեր ժամանակագրության թվականները չեն համընկնում, որոշ դեպքերում երկուստեք բացակայում են պատրիաքների անուններ, սակայն այդ տեղերը թողնում ենք առանց մեկնաբանության:

«Թիւք պատրիարքաց»	Մաղաքիա Օրմանյան
1311 Սարգիս	Սարգիս 1281-1313
1314 Աստուածատուր	Աստվածատուր 1313-1316
1318 Դաւիթ	Դավիթ 1316-1321
--	Պողոս 1321-1323
--	Վարդան Արեւելցի 1323-1332
--	Հովհաննես Ճոսլին 1332-1341
1355 Վասիլ	Բարսեղ 1341-1356
1361 Գրիգոր եւ Մկրտիչ	Գրիգոր 1356-1363
--	Մկրտիչ 1363-1378
1366՞ Յոհան Լեհացի	Հովհաննես Լեհացի 1378-1386
1396՞ Գրիգոր Մսրցի	Գրիգոր Եգիպտացի 1386-1391
1398 Սարգիս	Սարգիս 1394–1415 Մարտիրոս աթոռակից 1399
1399 Սարգիս (այլ)	Եսայի 1391–1394
--	Մեսրոպ 1402
1417՞ Պօղոս	Պողոս Գառնեցի 1415-1419
1419 Մարտիրոս	Մարտիրոս Եգիպտացի 1419-1430 Մինաս 1426
1424 Եսայի	Եսայի 1430-1431
1431 Յոհաննէս	Հովհաննես 1431-1441 Մյուռոն 1436-1437
1441 Աբրահամ	Աբրահամ Մսրցի 1441-1454
1454 Մեսրովբ	Մեսրոպ 1454-1461
1461 Պետրոս	Պետրոս 1461-1476
1463 Պետրոս (այլ՞)	--

1476 Մկրտիչ	Մկրտիչ Իլովցի 1476-1479
1501 Պետրոս	Պետրոս 1501-1507
--	Աբրահամ Բերիացի 1479-1485 Հովհաննես Մսրցի 1485-1491 Մարտիրոս Պրուսացի 1491-1501 Սարգիս 1507-1517 Հովհաննես Թլկուրանցի 1517-1522
1523 Աստուածատուր Միտնեցի	Աստվածատուր Մերդինցի 1532-1542, 1550-1551
--	Փիլիպպոս 1542-1550
1551 Աստուածատուր (այլ)	–
1561 Աստուածատուր (այլ)	–
1572 Աստուածատուր եւ Անդրէաս	Անդրեաս Մերդինցի 1551-1583
1580 Սահակ	–
1601 Գրիգոր Գանձակեցի Պարոնտէր	Գրիգոր Գանձակեցի Պարոնտեր 1613-1645
1622՝ Դաւիթ	Դավիթ Մերդինցի 1583–1613
1671՝ Աստուածատուր	Աստվածատուր Տարոնեցի 1645-1664, 1665-1666, 1668-1670 Եղիազար Հռոմկլայեցի 1664-1665
--	Մարտիրոս Ղրիմեցի 1677-1680, 1681-1684 Հովհաննես Ամասիացի Թոփալ հակաթոռ 1680
1678՝ Եղիազար	Եղիազար Այնթապցի 1666-1668, 1670-1677
1698 Յոհան	Հովհաննես Կոստանդնուպոլսեցի 1684-1697 Սիմեոն հակաթոռ 1688-1691
1704 Մինաս	Մինաս Համդեցի 1697-1704
1704-1717 Կ. Պոլսի փոխանորդներ (վեքիլներ)	Կ. Պոլսի պատրիարքությանը միացված շրջան 1704-1715
1720 Գրիգոր Շղթայակիր	Գրիգոր Շիրվանցի Շղթայակիր 1715-1749
Յակովբ	Հակոբ Նալյան Զմմարացի 1749 - հրժրվ. 1752
Թեոդորոս	Թեոդորոս Խորենացի 1752-1761
1762 Կարապետ Կենճեցի	Կարապետ Գանձակեցի 1761-1768
1768 Պօղոս Վանեցի	Պողոս Վանեցի 1768-1775
1775 Յովակիմ Քանաքեռցի	Հովակիմ Քանաքեռցի 1775-1793
1795 Պետրոս Եւդոկացի	Պետրոս Եվդոկացի 1793-1800
1802 Թեոդորոս Վանեցի	Թեոդորոս Վանեցի 1800-1818
1819 Գաբրիէլ Նիկոմեդացի	Գաբրիել Նիկոմիդացի 1818-1840
--	Պողոս Աղրիանուպոլսեցի 1824-1847
1841 Զաքարիա Կորեցի	Զաքարիա Կոփեցի 1840-1846
1847 Կիրակոս Երուսաղեմացի	Կիրակոս Երուսաղեմցի 1846-1850
1850 Յովհաննէս Մովսիսեան Զմիւռնացի	Հովհաննես Զմյուռնացի 1850-1860

РЕЗЮМЕ

В армянской патриархии Иерусалима сохранились не только рукописьные книги, но и средневековые царские указы, приказы, судебные решения и различные архивные документы, которые описывают жизнь в средневековом Иерусалиме.

В течение 2000-2002 годов, работая в армянской духовной семинарии Иерусалима, мы имели возможность участвовать оцифрованую таких документов.

Один из таких сборников, который содержит описания многих решений и актов, содержит также краткую хронологию армянских патриархов Иерусалима. Хронология имеет в себе в некотором смысле новую информацию о патриархов, начиная с 1311 и до 1860 г. В данной статье хронология опубликуется полностью.

SUMMARY

In the Armenian patriarchate of Jerusalem are presented not only manuscripts, but also medieval archived documents: royal decrees, orders, judicial decisions etc.

The author participated in digitizing of such documents, while teaching at the Theological seminary in Jerusalem during 2000- 2002.

At the end of such an archived notebook, which contains descriptions of many of the decisions, is preserved a brief chronology referring to Jerusalem's Armenian patriarchs. It contains some new details about Armenian patriarchs beginning from 1311 up to 1860.

In the present article that unpublished chronology is presented and published completely.